ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը
(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

~~4. Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է բազային աշխատավարձի կրկնապատիկի և այդ աշխատողների թվի արտադրյալով:~~

4. Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է Վիճակագրական կոմիտեի կողմից պլանավորմանը նախորդող տարում պետական հատվածում 50 և ավելի աշխատողներ ունեցող կազմակերպությունների հունվար-դեկտեմբեր ամիսների անվանական միջին աշխատավարձի 100 տոկոսի և աշխատողների թվաքանակի արտադրյալի միջոցով: Բյուջետային հայտերը կազմելիս այս ֆոնդը վերանայվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ներկայացված գնաճի ցուցանիշների արտադրյալի միջոցով: